Սոցիալական մեդիան՝ կրթության գործիք Հայոց լեզվի և գրականության դասաժամերին

Դասընթացավար՝ Երազիկ Արշակյան
Գեղարքունիքի մարզի Աստղաձորի միջն. դպրոց

Թեման՝ «Հասարակաց որդեգիրը» պատմվածք

Գրականություն

8-րդ դասարան

Նպատակը՝

- Զարգացնել գրական բնագրերը ընթերցելու, դրանց բովանդակությունը և հիմնական միտքը ընկալելու կարողունականություն:
- Զարգացնել մեդիայի դրական ու բացասական ազդեցությունը դեռահասների վրա գնահատելու հմտություն:
- Խթանել սոցցանցերի ազդեցությունը մարդու զգացմունքների ու վարքի վրա հասկանալու և քննարկելու հմտություն,

Վերջնարդյունքը՝

- «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի ուսումնասիրման գործընթացում համագործակցելով ընկերների և ուսուցիչների հետ, ստեղծի ու հրապարակի թվային նյութեր, մեդիայի տարբեր տեսակների համար:
- Արժևորի և գնահատի սոցիալական ցանցի վեբկայքերի օգտագործման դրական եղանակները: Վեբ միջավայրում սոցիալական ցանցերի, բլոգների, փոդքասթների և տեսաբլոգների միջոցով ինքնադրսևորվի:
- Կարգավորի իր սոցցանցային ժամանակն ու վարքը, իսկ համացանցը օգտագործի որպես կրթական հարթակ:

- Դասի խնդիրը.

Պատմվածքի ընթերցման, վերլուծման, խմբային աշխատանքների միջոցով գրավոր տեքստերում ցույց տալ դեպքերի հաջորդական ընթացքը

+

Տեքստը վերաշարադրել, վերապատմել գրավոր և բանավոր՝ հետևելով գործողությունների ընթացքին՝ ապահովելով համացանցի արդյունավետ օգտագործումը

=

Դասի խնդիրը

Դասի ընթացքը

Քայլ 1

- Սահիկաշարով ներկայացվում է Մուրացանի կյանքն և գրական գործունեությունը և ներկայացվում ըստ հանձնարարականի (2-3 օր առաջ), աշակերտների կողմից պատրաստված պաստառը:
- Սովորողները արտասանում են ասույթներ նվիրված Մուրացանին և կպչուն թերթիկների վրա գրելով Մուրացանի պատգամներից ամրացնում են «Մուրացանը ասել է…» խորագիրը կրող վահանակին:

Քայլ 2./ Գործնական աշխատանք

- Աշակերտները բաժանվում են խմբերի և համացանցից օգտվելով Մուրացանի ինքնակենսագրական ստեղծագործություններում հավաքագրում գրողի ու նրա «Հասարակաց որդեգիր» պատմվածքի հերոսի՝ Գևորգի առընչություններն ու նմանությունները:
- Քննարկման ու վերլուծության արդյունքում սովորողներն ընդհանուր ուժերով եզրահանգում են այն մտքին, որ միանգամայն արդարացի է հեղինակի՝ «ազգասերների» խոստումնազանցության և խաբեության դեմ ուղղված ազնիվ զայրույթը:

Քայլ 3.

Հանձնարարվում է գտնել «Հասարակաց որդեգիր» պատմվածքի բովանդակության եզրեր այլ ստեղծագործություններում:

«Հասարակաց որդեգիր»

Հ. Թումանյան «Իմ ընկեր Նեսոն»

Շիրվանզադե «Արտիստը»

Ռ. Պատկանյան «Չախու»

Քայլ 4

- Բլոգի ստեղծում, որը կնպաստի «Հասարակաց որդեգիր» ստեղծագործության լայն տարածմանը:
- Ցուցապաստառի պատրաստում և ներկայացում :
- Սահիկաշարի պատրաստում և ներկայացում:



Քայլ 5

Դասի ամփոփման համար օգտագործում է ելքի քարտ

- Երեք բան, որ սովորեցի այսօր…
- Երկու բան, որ հետաքրքրեց ինձ…
- Մեկ բան, որ մնաց անհասկանալի…

Տնային առաջադրանք

Համացանցից և այլ աղբյուրներից հավաքել հետաքրքաշարժ նյութեր հայ մեծահարուստ-բարերար, ազգասեր Ալ. Մանթաշյանցի մասին, ով հովանավորել է մի շարք հայ տաղանդավոր երիտասարդների՝ վճարելով նրանց ուսման վարձը և ապահովել ապրուստի միջոցները:

Ընտրել մեդիայի ձեր նախընտրած տարբերակը և պատրաստել

- ցուցապաստառ
- սահիկաշար
- տեսանյութ
- վարել բլոգ

Հատվածներ դասից և ներկայացված աշխատանքներից







Օգտագործված գրականության ցանկ

- «Մեդիա գիտություն» ուսումնական ձեռնարկ, Երևան 2013թ.
- Մուրացան «Պատմվածքներ» Երևան, «Հայպետհրատհրատ»

Կայք էջեր

- https://hy.wikipedia.org/wiki/
- https://media.am/hy/category/medialiteracy/
- https://actual.am/hy/blog/mediagragitutyu

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- *Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի, կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:*